



ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 1

Աշխատանքային փաթեթ

Առաջադրանքները կազմված են համակարգչով աշխատելու համար .

Կազմող՝
Լուսինե Փաշայան

Մաթեմատիկա

Առաջին դասարան

Աշխատանքային
փաթեթ

Չորրորդ մաս

ՄԻՒԹԱՐ
ՍԵԲԱՍՏԱՑԻ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
Իմացումի հրճվանք
կրթական ծրագիր

Իմ էլ. փոստի հացեն՝
l.pashayan

Լրացրո՛ւ պակասող թվերը:

1	2	3	4	5	6	7	8	9	10
11	12								
21									
31									
41									
51									
61									
71									
81									
91									

Կանաչով ներկի՛ր այն թվերը, որոնց միավորը 5 է:

Դեղինով ներկի՛ր այն թվերը, որոնց տասնավորը 7 է:

Կարմիրով ներկի՛ր 0-ով վերջացող թվերը:

Արագ հաշվի՛ր ներկված վանդակները:

Լրացրու՝ պակասող թվերը:

1	2							9	10
11	12							19	20
21						27	28		
31							38		
41					46				
51			54						
61									
71							78		
81					86				
91			94						

Կարդա՛ և ներկի՛ր համապատասխան վանդակը:

$$20 + 8 =$$

$$30 + 30 + 8 =$$

Այն թիվը, որն ունի 1 տասնյակ և 3 միավոր

$$20 + 3 =$$

$$70 + 4 =$$

Այն թիվը, որն ունի 1 տասնյակ և 8 միավոր

$$49 - 1 =$$

$$50 + 5 + 3 =$$

Այն թիվը, որն ունի 7 տասնյակ և 7 միավոր

$$100 - 20 =$$

20-ին հաջորդող թիվը

$$34 - 1 =$$

42- ին հաջորդող թիվը

$$70 + 5 + 1 =$$

$$74 + 1 =$$

54-ին նախորդող թիվը

$$60 + 3 =$$

$$60 + 10 + 3 =$$


Օգտվելով աղյուսակից՝ պատասխանի՛ր հարցերին:

Քանի՞ անգամ է կրկնվում 1 թվանշանը 1-100 թվերը գրելիս:

Քանի՞ անգամ է կրկնվում 5 թվանշանը 1-100 թվերը գրելիս:

Քանի՞ անգամ է կրկնվում 0 թվանշանը 1-100 թվերը գրելիս:

Օգտվելով գնացուցակից՝ կատարի՛ր գնումներ և հաշվի՛ր՝ որքան գումար է քեզ հարկավոր:



Որքա՞ն գումար է քեզ հարկավոր:

2 հատ բանան գնելու համար

3 հատ գազար և 1 հատ լոլիկ գնելու համար

2 հատ խաղող գնելու համար

3 հատ գազար և 2 հատ լոլիկ գնելու համար

Մեկական բանան, խնձոր և խաղող գնելու համար


Պատկերացրու, որ ունես 100 դրամ: Ինչե՞ր կարող ես գնել:

Տարբերակ 1


Տարբերակ 2

Տարբերակ 3


Կատարի՛ր գումարում:




$13 + 10 =$



$25 + 20 =$




$31 + 10 =$




$27 + 30 =$


Կատարի՛ր հանում:




$$23 - 10 =$$



$$35 - 20 =$$



$$48 - 30 =$$



$$56 - 20 =$$


Լրացրո՛ւ պակասող թվերը:

1	2				6			9	10
11	12			15			18		
21			24			27			30
31				35	36				
41					46				50
51		53					58		
61				65					
71	72					77			
81					86				
91			94				98		100

Կատարի՛ր առաջադրանքները և ներկի՛ր համապատասխան վանդակները:

- $40 + 5 =$
- 47-ին նախորդող թիվը՝
- 33-ին հաջորդող թիվը՝
- 60 և 4 թվերի գումարը՝
- 1 տասնյակ և 4 միավոր՝
- 20 –ը մեծացրո՛ւ 4-ով՝
- 6 տասնյակ և 6 միավոր՝
- 55-ին նախորդող թիվը՝
- $54 - 10 =$
- $46 + 10 =$

Պատկերների ո՞ր խմբով կատարվի ստանալ ընծուդտ:



Լուծի՛ր խնդիրները:

Կարինան ու Էրիկը ընկեր Լուսինեին 13 ծաղիկ նվիրեցին: Կարինան նվիրեց 7 ծաղիկ: Քանի՞ ծաղիկ նվիրեց Էրիկը:

Լուծում


Պատասխան՝

Արեգը պարտեզում 17 ծաղիկ տնկեց: Այդ ծաղիկներից 9-ը կակաչներ են, իսկ մնացածը՝ նարգիզներ: Քանի՞ նարգիզ տնկեց Արեգը:

Լուծում

Պատասխան՝

Հաշվի՛ր:



$20 + 4 =$


$24 - 4 =$

$24 - 20 =$

$24 + 10 =$

$24 - 10 =$

$24 - 3 =$



$30 + 7 =$

$37 - 7 =$

$37 - 30 =$

$37 + 20 =$

$37 - 10 =$

$37 - 5 =$

$9 + 6 =$

$4 + 8 =$

$12 - 7 =$

$17 - 9 =$

$6 + 7 =$

$3 + 9 =$

$14 - 8 =$

$15 - 8 =$

Լուծի՛ր ռեքուսը:

$$\text{☀} + \text{☀} + \text{☀} = \underline{\underline{9}}$$

$$\text{★} + \text{☀} + \text{★} = 5$$

$$\text{☾} + \text{☀} + \text{★} = \underline{\underline{6}}$$

Լուծի՛ր խնդիրները:

Տատիկը պատրաստեց 13 կարկանդակ: Դրանցից 5-ը մտավ են, իսկ մնացածը՝ կարտոֆիլով: Քանի՞ կարտոֆիլով կարկանդակ պատրաստեց տատիկը:

Լուծում

Պատասխան

Նարեն նկարեց 15 թիթեռ: 8 թիթեռը ներկեց կարմիր, իսկ մնացածը՝ դեղին: Քանի՞ դեղին թիթեռ նկարեց Նարեն:

Լուծում

Պատասխան

Լրացրո՛ւ՝ պակասող թվերը:


1	2				6			9	10
11	12		14			17			
21		23		25					30
31				35			38		
41					46				
51		53					58		
61			64						70
71	72	73				77			
81								89	
91				95			98		100

Կատարի՛ր առաջադրանքները և ներկի՛ր համապատասխան վանդակները:

- $20 + 4$
- $25 + 1$
- $65 - 1$
- 4 տասնյակ և 6 միավոր
- 6 տասնյակ և 6 միավոր
- 35 – ին նախորդող թիվը
- 19 – ին նախորդող թիվը

- 35 – ին հաջորդող թիվը
- $60 + 5$
- $20 + 20 + 10 + 4$
- $40 + 10 + 5 + 1$
- 4 տասնյակ և 4 միավոր


Երկրաչափական պատկերների խումբը մոտեցրո՛ւ համապատասխան նկարին:



Գ	1

Օգտվելով գնացուցակից՝ պատասխանի՛ր հարցերին:

ԳՆԱՑՈՒՑԱԿ




30 դրամ



20 դրամ



60 դրամ



10 դրամ

Որքա՞ն գումար է հարկավոր

- 2 գրիչ գնելու համար
- 2 ռետին գնելու համար
- 3 մատիտ գնելու համար
- 1 ստիլնձև և 1 ռետին գնելու համար

- 1 գրիչ և 1 սոսինձ գնելու համար
- 1 սոսինձ, 1 գրիչ և 1 մատիտ գնելու համար

Թվերը դասավորի՛ր աճման կարգով:

35, 89, 12, 40, 39

Թվերը դասավորի՛ր նվազման կարգով:

19, 40, 87, 65, 56

Լուծի՛ր խնդիրները:

Չամբյուղում կա 12 միրգ: Դրանցից 7-ը խնձոր է, մնացածը՝ դեղձ:

Քանի՞ դեղձ կա Չամբյուղում:

Լուծում

Պատասխան

Տուփում կա 15 կարմիր և դեղին գնդակ: 15-ից 7-ը դեղին են: Քանի՞ կարմիր գնդակ կա տուփում:

Լուծում

Պատասխան

Կռահի՛ր օրինաչափությունը և ավելացրու՛ ևս երեք թիվ:

11, 22, 33,

11, 21, 31,

Պատմի՛ր 67 թվի մասին

1. Թիվը գրի՛ր տառերով. _____
—
2. Ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով. $67 =$
____ + ____
3. Քանի՞ տասնյակ և միավոր ունի. Ունի _____ տասնյակ և _____
միավոր
4. Հարևան թվերն են՝ _____ և _____
5. Հաջորդող թիվն է՝ _____
6. Նախորդող թիվն է՝ _____
7. Ջո՞ւյգ է, թե՞ կենտ. _____
8. Միանի՞շ է, թե՞ երկնիշ. _____
9. Մեծացրո՛ւ
 - 1-ով _____
 - 3-ով _____
 - 20-ով _____
10. Փոքրացրո՛ւ
 - 3-ով _____
 - 7-ով _____
 - 40-ով _____

Քանի՞ երկնիչ թիվ է հնարավոր կազմել 6 և 7 թվանշաններով.

Քանի՞ երկնիչ թիվ է հնարավոր կազմել 2 , 5 , 8 թվանշաններով.

Քանի՞ երկնիչ թիվ է հնարավոր կազմել 1 , 9 , 0 թվանշաններով.

Լուծի՛ր ռեքուսը:

$$\text{☀} + \text{☀} + \text{☀} = 6$$

$$\text{★} + \text{☀} + \text{★} = 12$$

$$\text{☾} + \text{☀} + \text{★} = 10$$

արև	աստղ	լուսին

քառակուսի	շրջան	աստղ

Լուծի՛ր խնդիրները:

20 արշավականներ մեկ շարքով բարձանում են Արագած լեռը: Արամը,

$$\square + \square + \square = 15$$

$$\circ + \square + \circ = 9$$

$$\star + \circ + \square = 13$$

վերջից հաշված՝ շարքում
 իններորդն է, իսկ
 Ռուբենը՝ սկզբից
 հաշված՝ տասներորդն է:
 Քանի՞ արշավական կա
 Արամի և Ռուբենի միջև:


Արեգը Դավթին տվեց իր մոտ եղած կոնֆետների կեսը: Դավիթը ունեցավ
 5 կոնֆետ: Արեգը սկզբում քանի՞ կոնֆետ ուներ, եթե Դավիթը սկզբում
 ուներ մեկ կոնֆետ:

10 թիթեռները նստոտեցին չորս ծաղիկների վրա: Բոլոր ծաղիկների վրա տարբեր քանակով թիթեռ նստեց: Յուրաքանչյուր ծաղկի վրա քանի՞ թիթեռ նստեց:


Ստեֆանին, Էլենան, Վիկտորյան և Վանեն որոշեցին լուսանկարվել՝ կանգնելով կողք կողքի: Նրանք որոշեցին լուսանկարվել տարբեր ձևերով: Քանի՞ լուսանկար կստացվի, եթե Էլենան և Վիկտորյան միշտ իրար կողքի պիտի կանգնեն:

Ագարակում ապրող ճագարին կերակրում են երկու տարբեր բանջարեղենով: Հարությունը տնից բերեց կաղամբ, բազուկ և գագար: Քանի՞ տարբեր կերակուր կունենա ճագարը:


Հաշվի՛ր:



$66 - 6 =$



$43 - 3 =$






$52 - 2 =$

$66 - 60 =$

$43 - 40 =$

$52 - 50 =$



$43 - 3 =$

$36 - 6 =$

$81 - 1 =$

$43 - 40 =$

$36 - 30 =$

$81 - 80 =$

Լուծի՛ր խնդիրները:

Նարինջը էժան է խնձորից, բայց թանկ է խաղողից: Մրգերից ո՞րն է ամենից թանկը:

Երկու ընկեր գնացքով հարևան քաղաք մեկնեցին: Գնացքը ուներ 13 վագոն: Ընկերներից մեկը առջևից 3-րդ վագոնը նստեց, իսկ մյուսը՝ վերջից 7-րդը: Ընկերների միջև քանի՞ վագոն կա:

Արկղում կա 2 բազուկ և 3 գազար : Ագարակի նապաստակներին կերակրելու համար Դավիթը, առանց նայելու, արկղից վերցրեց 4 բանջարեղեն: Նապաստակները գազար կերա՞ն:

Ուսումնական ճամփորդության ժամանակ Կարինան մի քանի դեղձ բաժանեց իր և իր 7 ընկերների միջև: Յուրաքանչյուրը ստացավ կես խնձոր: Քանի՞ խնձոր բաժանեց Կարինան:

Հասմիկը, Սամվելը, Էդուարդը և Միքայելը որոշեցին լուսանկարվել՝ կանգնելով կողք կողքի (մեկ շարքով): Քանի՞ լուսանկար կստացվի, եթե նրանք լուսանկարվեն բոլոր հնարավոր տարբերակներով:

Լրացրո՛ւ մայիս ամսվա օրացույցի պակասող թվերը:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
				1		

Կարդա՛ և պատասխանի՛ր հարցերին:

1.	Քանի՞ շաբաթ ունի մայիս ամիսը:	
2.	Քանի՞ երեքշաբթի ունի մայիս ամիսը:	
3.	Այսօր մայիսի քանի՞ սն է: Օրացույցի վրա կարմիրով նշի՛ր այսօրվա ամսաթիվը:	
4.	Վաղը մայիսի քանի՞ սը կլինի: Նշի՛ր կանաչով:	
5.	Հինգ օր առաջ մայիսի քանի՞ սն էր: Նշի՛ր կապույտով:	
6.	Ութ օրից մայիսի քանի՞ սը կլինի:	
7.	Երեք օր առաջ մայիսի քանի՞ սն էր:	

Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- Մայիսի 15-ը շաբաթվա ի՞նչ օր է:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Մայիսի 21-ը շաբաթվա ի՞նչ օր է լինելու:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Հինգ օրից շաբաթվա n ր օրն է լինելու:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Յոթ օր առաջ շաբաթվա h նշ օր էր:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Ինչպիսի՞ եղանակ է այսօր:

արևոտ	քամոտ	անձրևային	ամպամած	ցրտոտ	տաք	պայծառ
-------	-------	-----------	---------	-------	-----	--------

Պատմի՛ր 36 թվի մասին

11. Թիվը գրի՛ր տասերով. _____

—

12. Ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով. $36 =$

_____ + _____

13.Քանի՞ տասնյակ և միավոր ունի. Ունի — տասնյակ և —
միավոր

14.Հարևան թվերն են՝ — և —

15.Հաջորդող թիվն է՝ —

16.Նախորդող թիվն է՝ —

17.Զո՞ւյգ է, թե՞ կենտ. —

18.Միանի՞շ է, թե՞ երկնիշ. —

19.Մեծացրո՞ւ

- 3-ով —
- 2-ով —
- 10-ով —

20.Փոքրացրո՞ւ

- 2-ով —
- 5-ով —
- 20-ով —

Լրացրո՞ւ աղյուսակը:

գումարելի		գումարելի		գումար
4	+	3	=	
7	+	8	=	

10	+	4	=	
30	+	9	=	
22	+	10	=	

Գտի՛ր անհայտ գումարելին:

$$7 + \underline{\quad} = 10$$

$$8 + \underline{\quad} = 11$$

$$10 + \underline{\quad} = 17$$

$$20 + \underline{\quad} = 50$$

$$45 + \underline{\quad} = 65$$

Հաշվի՛ր:

$$34 + 21 = 50 + 5 = 55$$

$$25 + 12 =$$

$$53 + 35 =$$

$$85 + 11 =$$

$$41 + 57 =$$

Գրի՛ր ժամը քանիսին է:



Ա



Բ




Գ



Դ



Ե



Զ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ

Լրացրո՛ւ աղյուսակը:

Նվազելի		Հանելի		Տարբերություն
8	–	3	=	
13	–	8	=	
24	–	4	=	
39	–	9	=	
25	–	20	=	

Գրի՛ր պակասող թիվը:

նվազելի		հանելի		տարբերություն
43	-	3	=	
54	-	50	=	
42	-		=	40
98	-		=	8
65	-	40	=	
35	-	14	=	

Հաշվի՛ր:

$$23 - 12 = 10 + 1 = 11$$

$$45 - 34 =$$

$$67 - 55 =$$

$$98 - 67 =$$

$$89 - 58 =$$

Գրի՛ր ժամը քանիսին է:



Ա



Բ



Գ



Դ



Ե



Զ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ

Լուծի՛ր խնդիրները:

Սեխը ծանր է դդումից, բայց թեթև է ձմերուկից: Ո՞րն է ամենածանրը:

Հինգ օր առաջ Արևմտյան դպրոցի սովորողները մասնակցեցին շախմատի ֆլեշմոբին: Շաբաթվա ո՞ր օրն էր ֆլեշմոբը, եթե վաղը կիրակի է:

Պարի խմբում կար 19 տղա և 25 աղջիկ: Ամեն օր խմբին միանում էր 2 աղջիկ և 3 տղա: Քանի՞ օրից պարախմբում տղաների և աղջիկների քանակները կհավասարվեն:

Տուփում կա 3 կարմիր և 5 կանաչ միանման գնդակներ: Առանց նայելու քանի՞ գնդակ պետք է վերցնել, որ գոնե 1 դեղին գնդակ դուրս գա:

Գազիկը գարնանը 20 սմ բարձրություն ունեցող եղևնի տնկեց: Տնկին ամեն տարի բարձրանում է 20 սանտիմետրով: Տնկելուց քանի՞ տարի հետո Գազիկի եղևնու բարձրությունը կլինի 80 սմ:

Ըստ օրինակի կազմի՝ ը հավասարություններ:

7, 5, 12	8, 3, 11	5, 9, 14	7, 8, 15	9, 6, 15	8, 9, 17
$7 + 5 =$					
$5 + 7 =$					
$12 - 5 =$					
$12 - 7 =$					

Գրի՝ ը պատկերների անունները:



<i>գույնը</i>	<i>Պատկերի անվանումը</i>
կարմիր	շրջան, ութանկյուն
դեղին	
կապույտ	
Կանաչ	
նարնջագույն	
Դեղին և հավասարակողմ	
Կարմիր և բազմանկյուն	

Հաշվի՛ր.

$8 + 4 =$

$5 + 9 =$

$7 + 6 =$

$4 + 8 =$

$9 + 5 =$

$6 + 7 =$

$12 - 4 =$

$14 - 5 =$

$13 - 7 =$

$12 - 8 =$

$14 - 9 =$

$13 - 6 =$

$24 + 3 =$

$43 + 5 =$

$76 + 2 =$

$39 - 6 =$

$47 - 2 =$

$74 - 1 =$

$12 + 20 =$

$45 + 50 =$

$68 + 20 =$

$34 - 10 =$

$57 - 40 =$

$98 - 45 =$

$23 + 12 =$

$56 + 43 =$

$37 + 42 =$

$78 - 43 =$

$87 - 46 =$

$85 - 24 =$

Հաշվի՛ր և գրանցի՛ր պատկերների քանակը:



Ձվածիք	
Եռանկյուն	
Ուղղանկյուն	
Շրջան	
Քառակուսի	

Ըստ օրինակի կազմի՛ր հավասարություններ:

15, 10, 5	8, 5, 13	20, 4, 24	9, 7, 16	30, 7, 37	23, 12, 35
$10 + 5 = 15$					
$5 = 10 = 15$					
$15 - 5 =$					
$15 - 10 =$					

Լուծի՛ր խնդիրները:

Լողի պարապմունքին երկուշաբթի մասնակցեցին 11 տղա և 5 աղջիկ: Երեքշաբթի նրանց միացան մեկ տղա և երեք աղջիկ: Եվ այդպես ամեն օր: Շաբաթվա n° օրը տղաների և աղջիկների քանակը կհավասարվի:

Գրապահարանի դարակում 17 գիրք կար: Լևոնը որոշեց վերցնել Հ Թումանյանի «Պոչատ աղվեսը» գիրքը: Նատալին հուշեց նրան, որ գիրքը վերջից հաշված ութերորդն է: Սկզբից հաշված n° բերորդ գիրքը պետք է վերցնի Լևոնը:

Երեք ընկերները միասին 6 պաղպաղակ կերան: Բոլորը տարբեր քանակի պաղպաղակ կերան: Քանի՞ պաղպաղակ կերավ ընկերներից յուրաքանչյուրը:

Էրիկը տատիկի հետ պատրաստեց թխվածքաբլիթներ: Նա իր պատրաստած թխվածքաբլիթների կեսը կերավ իր եղբոր հետ: Մնացածի կեսը տարավ դպրոց, և մնաց ընդամենը չորս թխվածքաբլիթ: Սկզբում քանի՞ թխվածքաբլիթ թխեցին Էրիկը և տատիկը:

Մայրիկների տոնին պատրաստվելու համար սովորողները կավից կախազարդեր պատրաստեցին: Մեկ կիլոգրամ կավից պատրաստեցին 20 կախազարդ: Սովորողները քանի՞ կախազարդ կպատրաստեն երկուսու կես կիլոգրամ կավից:

Լրացրո՛ւ հունիս ամսվա օրացույցի պակասող թվերը:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
					20	

Կարդա՛ և պատասխանի՛ր հարցերին:

1.	Քանի՞ երկուշաբթի ունի հունիս ամիսը:	
2.	Քանի՞ կիրակի ունի հունիս ամիսը:	
3.	Այսօր հունիսի քանի՞ սն է: Օրացույցի վրա դեղինով նշի՛ր այսօրվա ամսաթիվը:	
4.	Վաղը հունիսի քանի՞ սը կլինի: Նշի՛ր կանաչով:	
5.	Վեց օր առաջ հունիսի քանի՞ սն էր: Նշի՛ր կապույտով:	
6.	Ինը օրից հունիս քանի՞ սը կլինի:	
7.	Չորս օր առաջ հունիսի քանի՞ սն էր:	

Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- Հունիսի 12-ը շաբաթվա ի՞նչ օր է:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Հունիսի 17-ը շաբաթվա ի՞նչ օր է լինելու:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Երեք օրից շաբաթվա ո՞ր օրն է լինելու:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Ութ օր առաջ շաբաթվա ի՞նչ օր էր:

երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ	կիրակի
------------	-----------	------------	-----------	--------	-------	--------

- Ինչպիսի՞ եղանակ է այսօր:

արևոտ	քամոտ	անձրևային	ամպամած	ցրտոտ	տաք	պայծառ
-------	-------	-----------	---------	-------	-----	--------

Միևնույն արժեք ունեցող արտահայտությունները ներկի՛ր միևնույն գույնով:

$12 - 9$	$9 + 1$	$4 + 1$	$20 - 6$
$20 + 10$	$44 - 30$	$29 + 1$	$90 - 60$
$7 + 7$	$6 - 3$	$15 - 5$	$9 - 4$
$40 - 10$	$10 + 4$	$30 - 0$	$20 - 10$
$10 - 5$	$25 + 5$	$2 + 1$	$24 - 10$
$100 - 70$	$8 - 3$	$28 + 2$	$37 - 7$
$65 - 51$	$11 - 6$	$90 - 80$	$3 - 0$

Թվերը դասավորի՛ր աճման կարգով:

- 16, 61, 75, 57, 77
- 12, 98, 89, 88, 99, 21

Թվերը դասավորի՛ր նվազման կարգով:

- 45, 45, 67, 76, 66, 77
- 23, 89, 32, 17, 71, 99

Քանի՞ տարբեր թվանշան ենք օգտագործում 23–ից 39 թվերը գրելու համար:

Պատմի՛ր և 77 թվի մասին

21. Թիվը գրի՛ր տառերով. _____

—

22. Ներկայացրո՛ւ կարգային գումարելիների գումարի տեսքով. $77 =$

___ + ___

23. Քանի՞ տասնյակ և միավոր ունի. Ունի _____ տասնյակ և _____ միավոր

24. Հարևան թվերն են՝ _____ և _____

25. Հաջորդող թիվն է՝ _____

26. Նախորդող թիվն է՝ _____

27. Զո՞ւյգ է, թե՞ կենտ. _____

28. Միանի՞շ է, թե՞ երկնիշ. _____

29. Մեծացրո՛ւ

- 3-ով _____
- 1-ով _____
- 20-ով _____

30. Փոքրացրո՛ւ

- 2-ով _____
- 6-ով _____
- 50-ով _____

Լուծի՛ր խնդիրները:

Արևմտյան դպրոցի սովորողները ջերմոցից հավաքեցին 16 կգ վարունգ:
Հավաքած վարունգի կեսը թթու դրեցին: Մնացած վարունգի կեսը
օգտագործեցին աղցանի համար: Քանի՞ կիլոգրամ վարունգ մնաց:

Երկու կիլոգրամ այլուրից 40 գաթա կարելի է թխել: Հասմիկն ու մայրիկը
օգտագործեցին մեկ ու կես կիլոգրամ այլուր: Քանի՞ գաթա թխեցին:

Նարեն ունի 24 մատիտ, Նոանեն ունի 30 մատիտ: Նոանեն քանի՞
մատիտ նվիրի Նարեին, որ երկուսի մատիտների քանակները
հավասարվեն:

Դպրոցական ավտոբուսում կար 18 մարդ: Կանգառներից
յուրաքանչյուրում իջավ 5 մարդ և բարձրացավ՝ 2 -ը: Քանի՞ մարդ կար
ավտոբուսում 4-րդ և 5-րդ կանգառների միջև:

Սկյուռիկն ուներ 20 սունկ: Ամեն օր նա ուտում էր երկու սունկ: 20-րդ
սունկը նա կերավ երկուշաբթի: Շաբաթվա ո՞ր օրն էր նա սկսել ուտել իր
սնկերը:

Հաշվի՛ր.

$42 + 3 =$

$34 + 5 =$

$66 + 2 =$

$97 - 4 =$

$75 - 2 =$

$45 - 1 =$

$25 + 20 =$

$52 + 10 =$

$61 + 30 =$

$47 - 10 =$

$97 - 40 =$

$94 - 50 =$

$34 + 13 =$

$64 + 32 =$

$71 + 28 =$

$85 - 34 =$

$97 - 41 =$

$55 - 44 =$

Ո՞ր կտորն է պոկվել:



Լուծի՛ր խնդիրները:

Դավիթն այս ամառ ճամփորդեց ավելի շատ, քան Արամը, իսկ Նարեն՝ ավելի շատ, քան Դավիթը: Ո՞վ ամենաքիչը ճամփորդեց:

Երեք ընկերներ գնացին գյուղ՝ կեռաս, խնձոր և սալոր հավաքելու: Լևոնը ո՛չ սալոր հավաքեց, ո՛չ կեռաս, Գագիկը՝ ո՛չ կեռաս, ո՛չ խնձոր: Ի՞նչ միրգ հավաքեցին Լևոնը, Գագիկը և Լեոն:

Երկու ընկեր գնացքի նույն վագոնով հարևան քաղաք մեկնեցին: Ընկերներից մեկը առջևից 5-րդ վագոնը նստեց, իսկ մյուսը՝ վերջից 5-րդը: Քանի՞ վագոն ուներ գնացքը:

Վաչեն մեկից սկսեց մեկական հաշվել դեպի առաջ: Առաջին յոթ հատ թիվը արտասանեց աջ ոտքի վրա կանգնած: Հաջորդ յոթ հատ թիվը արտասանեց ձախ ոտքի վրա կանգնած: Եվ այդպես՝ յուրաքանչյուր յոթ հատ թիվ արտասանելուց հետո ոտքը փոխում էր: Ո՞ր ոտքի վրա կանգնած արտասանեց 28 թիվը:

Արեգը այժմ 6 տարեկան և 4 ամսեկան է: Քանի՞ ամիս հետո Վահեն կդառնա 7 տարեկան:

Օրվա ընթացքում 1 ձին խոտ է ուտում է 3 անգամ, ամեն անգամ՝ 10 կգ : Երեք օրում քանի՞ կգ խոտ կուտի ձին:

Երեկ Ստեֆանիի ծննդյան օրն էր: Վաղը ուրբաթ է: Շաբաթվա n^ր օրն էր
Ստեֆանիի ծննդյան տոնը: